



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌՈՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 17/20**

11.12.2020թ.

ք. Երևան

«Արտադրա-տպագրական» ՓԲ ընկերության տնօրեն Մափա Բաղիրյանը (այսուհետ՝ Դիմող) դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասի (մինչև 2011 թվականի հունիսի 23-ի ՀՕ-233-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) իրավակիրառ պրակտիկայի կողմից տրված մեկնաբանության՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասի (մինչև 2011 թվականի հունիսի 23-ի ՀՕ-233-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) իրավակիրառ պրակտիկայի կողմից տրված մեկնաբանության (համաձայն որի՝ գրավառուի և գրավատուի միջև փոխհաշվարկները պետք է կատարվեն գրավատուի կողմից գույքը օտարելու պահի դրությամբ, այլ ոչ թե՝ գրավի առարկան որպես սեփականություն ընդունելիս) համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 1, 3, 4, 10, 60, և 61, 63, 78, 79 ու 80, 81-րդ հոդվածներին:

Ըստ Դիմողի՝ Դիմողի համար բացասական իրավական հետևանքներ են առաջացրել ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից նրա նկատմամբ կիրառված և վճռաբեկ դատարանի № ԵՄԴ/1206/02/09 քաղաքացիական գործով 08.05.2020թ. որոշման մեջ անմիջականորեն վկայակոչված և փաստացի կիրառված, *inter alia*, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասի իրավահարաբերությունների ծագման պահի խմբագրմամբ դրույթները:

Դիմումով վիճարկվում է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից № ԵՄԴ/1206/02/09 գործով 08.05.2020թ. որոշմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի մինչև 23.06.11թ խմբագրությունը գործած 251-րդ հոդվածի 1-ին մասին իրավակիրառ պրակտիկայի կողմից տրված իմաստը՝ հաղորդած բովանդակությամբ հանդերձ, համաձայն որի՝ գրավատուի և գրավատուի միջև փոխհաշվարկները պետք է կատարվեն գրավատուի կողմից գույքը օտարելու պահի

դրությամբ, այլ ոչ թե՛ գրավի առարկան որպես սեփականություն ընդունելիս: Վիճարկվող դրույթի վերլուծությունից բխում է, որ գրավ դրված գույքի իրացումից հետո պարտավորության գումարը և կատարված ծախսերը պահելուց հետո մնացած գումարը պետք է վերադարձվի գրավատուին:

ՀՀ վճռաբեկ դատարանը № ԵԿԴ/0384/02/13 գործով 30.04.2015թ. որոշմամբ հետևյալ իրավական բովանդակությունն է հաղորդել սահմանադրաիրավական վեճի առարկա դրույթին. «Գրավի առարկան ի սեփականություն ընդունելը համարվում է գրավի առարկայի բռնագանձման ավարտ և գրավատուի ու գրավառուի միջև փոխհաշվարկները պետք է կատարվեն այդ օրվա դրությամբ»:

ՀՀ վճռաբեկ դատարանը, սույն դիմումի հիմքում ընկած № ԵՄԴ/1206/02/09 քաղաքացիական գործով 08.05.2020թ. որոշմամբ, արտահայտել է տարբերվող՝ հակասական դիրքորոշում № ԵԿԴ/0384/02/13 գործով 30.04.2015թ. որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումից և վիճարկվող նորմին հաղորդել է այնպիսի բովանդակություն, համաձայն որի՝ գրավատուի և գրավառուի միջև փոխհաշվարկները պետք է կատարվեն գրավառուի կողմից գույքն իրացնելու պահի դրությամբ:

Վիճարկվող դրույթը վերլուծության ենթարկելով ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից առաջ քաշված հարցադրումներով, Դիմողը հանգել է նրան, որ այն բավարար չափով որոշակի չէ, հնարավորություն չի տալիս իրավունքի սուբյեկտներին ընկալել օրենսդրի պահանջը, կանխատեսել դրա հետևանքները և իրենց վարքագիծը համապատասխանեցնել վիճարկվող դրույթով ամրագրված պահանջին, քանի որ հստակ չէ, թե որ պահի դրությամբ պետք է կատարվեն հաշվարկները գրավատուի և գրավառուի միջև:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, Դիմողը վիճարկում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասի (մինչև 2011 թվականի հունիսի 23-ի ՀՕ-233-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) իրավակիրառ պրակտիկայի կողմից տրված մեկնաբանության (համաձայն որի՝ գրավառուի և գրավատուի միջև փոխհաշվարկները պետք է կատարվեն գրավառուի կողմից գույքը օտարելու պահի դրությամբ, այլ ոչ թե՛ գրավի առարկան որպես սեփականություն ընդունելիս) համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 1, 3, 4, 10, 60, և 61, 63, 78, 79 ու 80, 81-րդ հոդվածներին:

Վիճարկվող մինչև 2011 թվականի հունիսի 23-ի ՀՕ-233-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունը հետևյալն է.

1. Գրավ դրված գույքի իրացումից ստացված գումարից՝ այդ գույքի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու համար ծախսերը վճարելու համար անհրաժեշտ գումարներ պահելուց հետո, բավարարվում են գրավատուի պահանջները, իսկ մնացած գումարը սրվում է գրավատուին:

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ *Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:*

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝

1. Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է:

2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:

3. Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

ՀՀ Սահմանադրության 4-րդ հոդվածի համաձայն՝ *Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա:*

ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:*

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

2. Ժառանգելու իրավունքը երաշխավորվում է:

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

4. Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

5. Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ:

6. Հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

7. Մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով:

8. Յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ն մասի համաձայն՝ Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների պրոյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անսպառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

ՀՀ Սահմանադրության 80-րդ հոդվածի համաձայն՝ Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ սույն գլխում ամրագրված դրույթների էությունն անխախտելի է:

ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի համաձայն՝

1. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

2. Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

Այսպես, Դիմողը վիճարկում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասի (մինչև 2011 թվականի հունիսի 23-ի ՀՕ-233-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականությունը այն դիտարկմամբ, որ քաղաքացիական տարբեր գործերի շրջանակներում ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից վիճարկվող դրույթին տրվել են տարբեր մեկնաբանություններ, մասնավորապես՝

1. թիվ ԵԿԴ/0384/02/13 քաղաքացիական գործով 30.04.2015թ. որոշմամբ արտահայտած դիրքորոշմամբ՝ գրավառուի և գրավատուի միջև հաշվարկները պետք է կատարվեն գույքը գրավառուին ի սեփականություն անցնելու պահին, իսկ

2. թիվ ԵՄԴ/1206/02/09 քաղաքացիական գործով 08.05.2020թ. որոշմամբ՝ գրավառուի և գրավատուի միջև հաշվարկները պետք է կատարվեն գույքը գրավառուի կողմից իրացվելուց հետո:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի և 63-րդ հոդվածի սահմանադրաիրավական նորմերը համանման բովանդակությամբ սահմանված էին մինչև 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներում, որոնց վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանն իր դիրքորոշումն է արտահայտել 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 և մի շարք այլ որոշումներում: Նշված որոշումներով բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 1, 3, 14, 18, 19, 42, 43 և այլ հոդվածներով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով, վկայակոչելով նաև ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, կարևորել է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ իրավական բավարար նախադրյալների ստեղծումն ու զարգացումը՝ հատկապես միջազգային այն պարտավորությունների շրջանակներում, որպիսիք Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է Եվրոպայի խորհրդի առջև: Դատական պաշտպանության

իրավունքն իր ամրագրումն է գտել մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, այդ թվում՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. եվրոպական կոնվենցիայում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական նախադեպերում: Այս իրավունքի հիմնական բովանդակությունը հանգում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի երաշխավորմանը և պետության կողմից այդ իրավունքի իրացման համար արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պարտականությանը: Անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից Սահմանադրության 18-րդ հոդվածի նպատակը իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է: Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ, և արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է: Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում:

ՀՀ Սահմանադրական դատարանը 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշման մեջ նշել է. «6. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ հայցը կամ դիմումը դատարան՝ իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում, ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ (ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մաս): Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի

պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից: Ակնհայտ է, որ առաջին հերթին այս պահանջը վերաբերում է դատարաններին, քանի որ այդ մարմիններն են, որ օժտված են իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով: Բացի դրանից, դատական իշխանությունն է, որ անկախ է բոլոր այլ մարմիններից և պարտավոր է վերահսկել իշխանության մյուս ճյուղերին պատկանող բոլոր մարմինների կողմից իրավաչափ գործելու իրենց պարտականության կատարումը, վերացնելով այդ մարմինների այն իրավական ակտերը, գործողությունները կամ անգործությունը, որոնք խախտում են անձանց սուբյեկտիվ իրավունքները կամ, այլ կերպ՝ ոտնձգում են Սահմանադրությամբ երաշխավորված իրավակարգի դեմ»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առանձնահատուկ կարևորել է, որ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծել անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար:

Այսինքն՝ անձը, դիմելով դատարան, պետք է լիարժեք դատական պաշտպանության իրավունք ունենա, սպահովված լինի արդար դատաքննություն իրականացնելու պետության պարտավորությամբ, իր իրավունքների լիարժեք պաշտպանության լեգիտիմ ակնկալիքով:

ՀՀ Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է իրավական որոշակիության և համաչափության սկզբունքներին և արտահայտել հետևյալ դիրքորոշումը.

2019 թվականի ապրիլի 2-ի ՍԴՌ-1452 որոշում. «Իրավական որոշակիության սկզբունքն ընկած է Սահմանադրության անփոփոխելի 1-ին հոդվածի հիմքում, որով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, **իրավական պետություն է:**

Իրավական պետությունը ենթադրում է իրավական օրենքի առկայություն, որը պետք է լինի հնարավորինս հստակ ու որոշակի և հնարավորություն տա դրա հասցեատերերին ձևավորելու և դրսևորելու համապատասխան վարքագիծ: Վերոնշյալ դիրքորոշումը հաստատվում է Սահմանադրական դատարանի 08.04.2008թ. ՍԴՌ-753 որոշմամբ, որում, մասնավորապես, նշվում է. «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլնի, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն

ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը»:

Անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին՝ Սահմանադրական դատարանն իր մեկ այլ՝ ՄԴՈ-1176 որոշմամբ կարևորել է նաև օրենսդրության մեջ կիրառվող հասկացությունների հստակությունը, նշելով, որ «...իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության»:

Վերագրյալով պայմանավորված՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է ինչպես հնարավորինս հստակ իրավակարգավորման առկայություն, այնպես էլ դրա կանխատեսելիության ապահովում: Մասնավորապես, իրավակարգավորման ձևակերպումը պետք է հնարավորություն տա անձին ոչ միայն դրան համապատասխան ձևավորելու իր վարքագիծը, այլև կանխատեսելու, թե ինչպիսի՞ն կարող են լինել հանրային իշխանության գործողությունները, և ի՞նչ հետևանքներ կառաջանան տվյալ իրավակարգավորման կիրառման արդյունքում»:

Անդրադառնալով համաչափության սկզբունքին՝ 2007 թվականի փետրվարի 7-ի ՄԴՈ-677 որոշման մեջ Սահմանադրական դատարանն արձանագրել է. «...Սահմանադրության 43 հոդվածի 1-ին մասում նաև անուղղակիորեն ամրագրված է հիմնական իրավունքների պաշտպանության համար կարևորագույն նշանակություն ունեցող սկզբունքներից մեկը՝ համաչափության սկզբունքը, որի համաձայն՝ օրենքը կարող է նախատեսել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք համապատասխանում են Սահմանադրությամբ սահմանված նպատակներին և պիտանի, անհրաժեշտ ու իրավաչափ են դրանց հասնելու համար»:

Ուսումնասիրելով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից թիվ ԵԿԴ/0384/02/13 քաղաքացիական գործով 30.04.2015թ. որոշմամբ արտահայտված դիրքորոշումը և թիվ ԵՄԴ/1206/02/09 քաղաքացիական գործով 08.05.2020թ. որոշմամբ արտահայտված դիրքորոշումը, պարզ է դառնում, որ մի դեպքում ՀՀ վճռաբեկ դատարանը գրավ դրված գույքի իրացում է համարել նաև գրավադրված գույքը գրավառուին ի սեփականություն անցնելու

պահը, մյուս դեպքում՝ որպես գրավադրված գույքի իրացում է դիտարկվել դրա փաստացի վաճառքի պահը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝

1. Գրավը դադարում է՝

4) գրավ դրված գույքը սույն օրենսգրքով սահմանված կարգով իրացվելու (վաճառվելու) դեպքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Գրավատուն իր պահանջի բավարարման նպատակով իրավունք ունի առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու այն, այդ թվում՝ գրավ դրված գույքը հիմնական պարտավորության համապատասխան չափի դիմաց գրավատուին կամ գրավատուի նշած երրորդ անձին ի սեփականություն հանձնելու, եթե՝

1) դա նախատեսված է գրավի պայմանագրով, կամ՝

2) առկա է գրավատուի և գրավատուի միջև կնքված գրավոր համաձայնություն, իսկ եթե գրավի պայմանագիր կնքելու համար պահանջվել է երրորդ անձի համաձայնություն կամ թույլտվություն, ապա նաև վերջինիս գրավոր համաձայնությունը՝ առանց դատարանի վճռի գրավ դրված գույքի իրացման մասին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 250-րդ հոդվածի համաձայն՝

1. Գրավ դրված գույքն իրացվում (վաճառվում) է հրապարակային սակարկություններով՝ հրապարակային սակարկությունների մասին օրենքով սահմանված կարգով:

Նոտարական կարգով վավերացված գրավի պայմանագրով կամ գրավատուի և գրավատուի միջև կնքված ու նոտարական կարգով վավերացված համաձայնությամբ կարող է սահմանվել գրավ դրված գույքի իրացման (վաճառքի) այլ կարգ:

2. Գրավ դրված գույքի՝ օրենքով սահմանված կարգով իրացման (վաճառքի) ընթացքում, եթե աճուրդը չկայացած է համարվել աճուրդի ընթացքում որևէ մասնակցի կողմից գույքի մեկնարկային գնի ավելացում չկատարվելու պատճառով, գրավատուն յոթ օրվա ընթացքում իրավունք ունի պահանջել գրավ դրված գույքը գրավով ապահովված պարտավորության և իրացման (վաճառքի) փաստացի ծախսերի դիմաց հանձնել իրեն՝ վճարելով գրավ դրված գույքի իրացման (վաճառքի) ծախսերը: Եթե գրավ դրված գույքի՝ տվյալ պահին ձևավորված գինն ավելի է գրավով ապահովված պահանջի և գրավ դրված գույքի իրացման (վաճառքի) ծախսերի հանրագումարից, ապա գրավատուն պարտավոր է գրավատուին փոխհատուցել

տարբերությունը, հակառակ դեպքում գրավառուն իրավունք ունի պակաս գումարն ստանալ պարտապանի այլ գույքից, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Վերոգրյալ դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ գրավադրված գույքի վրա բռնագանձում տարածելը և իրացնելն իր մեջ ներառում է նաև գրավ դրված գույքը հիմնական պարտավորության համապատասխան չափի դիմաց գրավառուին ի սեփականություն հանձնելը: Նման պայմաններում գրավադրված գույքի իրացումից ստացված գումարի բաշխումը կարգավորող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածի՝ մինչև «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 23.06.2011 թվականի ՀՕ-233-Ն օրենքով կատարված փոփոխությունը գործող դրույթները, տարածվել են նաև գրավադրված գույքը գրավառուին ի սեփականություն անցնելու դեպքերի վրա, քանի որ բռնագանձման հիմքով գրավի առարկան գրավառուի կողմից ի սեփականություն ընդունելը ևս համարվում է գրավի իրացում: Իսկ գրավի առարկայի իրացման դեպքում գրավը համարվում է դադարած: Դրանից հետո նշված գույքի վաճառքն արդեն համարվում է ոչ թե գրավադրված գույքի վաճառք, այլ բանկին ի սեփականություն անցած գույքի վաճառք. սովյալ դեպքում գրավառուն հանդես է գալիս արդեն որպես գույքի սեփականատեր:

Դատական պաշտպանության իրավունքի հիմնական բովանդակությունը հանգում է, սովյալ դեպքում, պետության կողմից այդ իրավունքի իրացման համար արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պարտականությանը: Անձի՝ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս:

Այսինքն՝ անձը պետք է լիարժեք դատական պաշտպանության իրավունք ունենա, ապահովված լինի արդար դատաքննություն իրականացնելու պետության պարտավորությամբ, իր իրավունքների լիարժեք պաշտպանության լեգիտիմ ակնկալիքով:

Հակառակ պարագայում արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացումը դառնում է ոչ մատչելի և թերի, չի բխում իրեն իրավական հոչակած պետության և ժողովրդավարական հասարակության նպատակներից:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ հանգում ենք այն եզրակացության, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հստակ կարգավորման պայմաններում ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵՄԴ/1206/02/09 քաղաքացիական գործով 08.05.2020թ. կայացված որոշմամբ սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 247-250 հոդվածների և 251-րդ հոդվածի՝ մինչև

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 23.06.2011 թվականի ՀՕ-233-Ն օրենքով կատարված փոփոխությունը գործող դրույթները: Մասնավորապես, նշված որոշման մեջ նշվում է. «Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, Բանկի և Ընկերության միջև փոխհաշվարկի կատարման համար հիմք ընդունելով գրավ դրված գույքը Բանկի կողմից ի սեփականություն ընդունելու (19.08.2009 թվական) դրությամբ առկա տվյալները, գտել է, որ Բանկից Ընկերության օգտին բռնագանձման ենթակա գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով հաշվարկվող սոկոսները ենթակա են բռնագանձման սկսած 20.08.2009 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարումը: Մինչդեռ, ինչպես նշվեց, Բանկի և Ընկերության միջև փոխհաշվարկը կատարելիս պետք է հիմք ընդունել գույքը Բանկի կողմից վաճառվելու (11.11.2011 թվական) դրությամբ առկա տվյալները: Նման պայմաններում Բանկից Ընկերության օգտին բռնագանձման ենթակա գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով հաշվարկվող սոկոսները ողջամտորեն չեն կարող բռնագանձվել սկսած 20.08.2009 թվականից»: Հասկանալի է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի նշված որոշումը, միևնույն օրենսդրական կարգավորումների պայմաններում, էսպես հակասում է նույն դատարանի կողմից թիվ ԵԿԴ/0384/02/13 քաղաքացիական գործով 30.04.2015թ. որոշման մեջ արատահայտած դիրքորոշմանը:

Համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով գույք է համարվում ոչ միայն գոյություն ունեցող նյութական միջոցը, այլ նաև՝ նյութական միջոցը ձեռք բերելու լեգիտիմ ակնկալիքը (մասնավորապես, Տրգոն ընդդեմ Խորվաթիայի գործով, Trgo v. Croatia, 2009 թ. հունիսի 11-ի վճիռ): Տվյալ դեպքում Դիմողը լեգիտիմ ակնկալիք է ունեցել ստանալ նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով հաշվարկվող սոկոսները՝ սկսած գրավարդված գույք գրավառուին ի սեփականություն անցնելու պահից:

Վերոգրյալի արդյունքում խախտվել են անձի՝ սահմանադրորեն երաշխավորված դատական պաշտպանության, արդար դատաքննության, ինչպես նաև սեփականության իրավունքները:

Եվ վերջում, հարկ ենք համարում մեջբերել ՀՀ Սահմանադրական դատարանի 2014 թվականի ապրիլի 18-ի ՍԴՈ-1148 որոշման մեջ տրված հետևյալ մեկնաբանումը. «6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական պետությունում, իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում, օրենքում ամրագրված

իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի հիմքում պետք է դրվի այն հիմնարար մոտեցումը, որ օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքը հանդիսանում է իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերից մեկը»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասին (մինչև 2011 թվականի հունիսի 23-ի ՀՕ-233-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) իրավակիրառ պրակտիկայի կողմից տրված մեկնաբանությունը՝ արտահայտված թիվ ԵՄԴ/1206/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2020թ. որոշման մեջ, չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 60, 61 և 63-րդ հոդվածներին:

Համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան

 Recoverable Signature

X Lyudvik Davtyan

Signed by: DAVTYAN LYUDVIK 1407840169